

ԷՐԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

*Հայաստանում ֆրանսիական
համալսարանի ուսանող*

ERIK ARAKELYAN

*Undergraduate student at the
French University in Armenia*

ЭРИК АРАКЕЛЯН

*Студент бакалавриата
Французского университета в Армении*

**ՀԱՅՑԻ ԱՌԱՐԿԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՅՑԱՊԱՀԱՆՋՆԵՐԻՑ ՀՐԱԺԱՐԿԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ
ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ**

**CORRELATION OF INSTITUTES OF REJECTION OF A CLAIM AND
CHANGE OF THE SUBJECT OF A CLAIM IN CIVIL PROCEEDINGS
OF THE REPUBLIC OF ARMENIA**

**СООТНОШЕНИЕ ИНСТИТУТОВ ОТКАЗА ОТ ИСКА И
ИЗМЕНЕНИЯ ПРЕДМЕТА ИСКА В ГРАЖДАНСКОМ
СУДОПРОИЗВОДСТВЕ РА**

Ինչպես գիտենք, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (ՀՀ ՔԴՕ) նախատեսում է երկու տարբեր դատավարական ինստիտուտներ՝ հայցի առարկայի փոփոխությունը և հայցապահանջից հրաժարումը: Սույն աշխատության շրջանակում հարկ ենք համարում անդրադառնալ այն հարցին, թե *ինչպես են ՀՀ քաղաքացիական դատավարությունում հարաբերակցվում հայցապահանջներից հրաժարումը և հայցի առարկայի փոփոխության ինստիտուտները:*

Նշված հարցին պատասխանելու համար նախ հարկ է վերլուծել հայցի առարկայի փոփոխության ինստիտուտը, և այն համադրել պահանջներից լրիվ կամ մասնակի հրաժարման ինստիտուտի հետ:

ՀՀ ՔԴՕ 170-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հայցվորը հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ ներկայացնում է գրավոր միջնորդություն մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

2. Սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի առարկայի փոփոխությունը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութափրավական պահանջն այլ պահանջով փոխարինելը, պահանջը փոփոխելը կամ լրացնելն է, այդ թվում՝ պահանջների

չափն ավելացնելը կամ նվազեցնելը, որը թույլատրում է առաջին ատյանի դատարանը: (...):

5. Հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը դատարանը մերժում է, եթե այն բավարարելու դեպքում փոփոխվում է այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, կամ քննվող գործը դուրս է գալու առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից: (...):»:

«Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է «հայցի առարկա» օրենսդրական եզրույթին և նշել, որ հայցի առարկան հայցվորի պահանջն է՝ ուղղված պատասխանողին կամ պատասխանողներին («Լարիսա Բաբայանն ընդդեմ Ալբերտ Հունանյանի» թիվ ԵԷԴ/1373/02/10 քաղաքացիական գործով «Վճռաբեկ դատարանի 11.05.2011 թվականի որոշումը):

[...] հայցն անհատականացվում է իր այս երկու տարրերի՝ հայցի հիմքի և առարկայի շնորհիվ: Հենց հայցի հիմքով ու առարկայով են որոշվում հայցերի նույնությունն ու տարբերությունը միևնույն սուբյեկտային կազմի դեպքում: «Օրենսդրությունն ընձեռում է հայցի հիմքն ու հիմքի և (կամ) առարկայի փոփոխելու հնարավորությունը, ընդ որում՝ հայցի առարկայի փոփոխությունը ենթադրում է հայցվորի՝ պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջի փոփոխություն, իսկ հայցի հիմքի փոփոխությունն իրենից ներկայացնում է այն հանգամանքների փոփոխությունը, որոնց վրա հիմնվում է այդ նյութաիրավական պահանջը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Օրենսդրությունը հայցի հիմքն ու հիմքի և (կամ) առարկայի փոխելու լիազորությունը վերապահում է միայն հայցվորին, և տվյալ դեպքում դատարանն ուղղակի հայցվորի համապատասխան միջնորդության առկայության դեպքում կարող է որոշում կայացնել բավարարելու կամ մերժելու հայցվորի՝ հայցի հիմքը կամ հիմքի և (կամ) առարկայի փոխելու վերաբերյալ միջնորդությունը, սակայն սեփական նախաձեռնությամբ վերոնշյալ գործողությունները կատարելու լիազորություն դատարանը չունի: [...] (թիվ ԵԿԴ/2924/02/11 գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 04-ի որոշումը):

«ՔԴՕ 170-րդ հոդվածի 5-րդ մասը հայցի հիմքի և առարկայի կամ դրանցից յուրաքանչյուրի թույլատրելիության համար սահմանել է երկու չափանիշի միաժամանակյա առկայություն՝ հայցի հիմքի և առարկայի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը դատարանն ընդունում է, եթե

1. չի փոփոխվում այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է,

2. քննվող գործը դուրս չի գալու առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից:

Իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը հիմնականում որոշվում են հայցի առարկայով, այսինքն՝ ինչպիսի նյութական իրավունք կամ օրենքով պահպանվող շահի պաշտպանություն է ակնկալում հայցվորը հարուցված հայցով: Պաշտպանության ակնկալվող իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը կարող է փոփոխվել նաև հայցի հիմքի փոփոխության արդյունքում, երբ հայցի փաս-

տական հիմքերն այնպես են փոխվում, որ փոփոխվում է իրավահարաբերության բնույթը, որը, ըստ էության, ենթադրում է նաև էապես այլ բնույթի նյութաիրավական վեճ կողմերի միջև: Նշված հանգամանքը պայմանավորված է նրանով, որ միևնույն նյութական կամ ոչ նյութական բարիքի շուրջ կարող են ծագել կամ գոյություն ունենալ տարբեր իրավունքներ կամ օրենքով պահպանվող շահեր, միևնույն նյութական կամ ոչ նյութական բարիքի հետ կապված պահանջը կարող է ներառվել տարբեր իրավունքների կամ օրենքով պահպանվող շահերի շրջանակներում:

Վերոնշյալ վերլուծություններից հետո անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև հայցի հիմքի և (կամ) առարկայի փոփոխության թույլատրելիության կամ մերժման հետ կապված հարցին՝ կապված հայցի հիմքի և (կամ) առարկայի փոփոխության թույլատրելիության հարցի քննարկման ժամանակ պետական տուրքի գանձման հետ:

ՀՀ ՔԴՕ 102-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ հայցի հիմքի և (կամ) առարկայի փոփոխելու դեպքում պետական տուրքի գումարի չբավականացնող մասը գանձվում է հայցի հիմքի և (կամ) առարկայի փոփոխելիս՝ փոփոխված հայցի առարկային համապատասխան:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ հայցի հիմքի և (կամ) առարկայի փոփոխելու դեպքում օրենսդիրը սահմանել է պետական տուրքի գանձման պահանջ այն դեպքում, երբ հայցի հիմքի և (կամ) առարկայի փոփոխելու դեպքում սկզբնական հայցով վճարված պետական տուրքի գումարը չի բավականացնում: Ընդ որում՝ պետական տուրքը գանձվում է հայցի հիմքի և (կամ) առարկայի փոփոխելիս:

ՀՀ ՔԴՕ 170-րդ հոդվածը կանոնակարգել է միայն հայցի առարկայի և (կամ) հիմքի փոփոխության ընդունման կամ մերժման բովանդակային մասը, հետևաբար՝ հայցի առարկայի փոփոխության դեպքում դատարանը պետք է անդրադառնա նաև պետական տուրքի գանձման հարցին՝ հիմք ընդունելով ՀՀ ՔԴՕ 102-րդ հոդվածի 11-րդ մասը:

Հայցի առարկայի փոփոխության վերաբերյալ գրավոր միջնորդություն ներկայացնելիս դատարանը թույլատրում է այն, եթե.

1. առկա չեն ՀՀ ՔԴՕ 170-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված արգելքները,

2. հայցի հիմքի և (կամ) առարկայի փոփոխելու միջնորդության արդյունքում սկզբնական հայցադիմումով վճարված պետական տուրքը հայցի նոր առարկայի շրջանակում չբավականացնելու դեպքում վճարված է պետական տուրքի չբավականացնող մասը կամ առկա է այդ մասով պետական տուրքի գծով արտոնություն տրամադրելու միջնորդություն, որը բավարարվել է դատարանի կողմից:

ՀՀ ՔԴՕ 12-րդ հոդվածին համապատասխան գործը հարուցվում է միայն ներկայացված հայցադիմումի հիման վրա: Միաժամանակ, նշված հայցադիմումի՝ վարույթ ընդունման և հետևաբար քաղաքացիական գործի հարուցման համար օրենսդիրը սահմանում է որոշ պարտադիր վավերապայմանների պահպանում: Մասնավորապես՝ ՀՀ ՔԴՕ 121-րդ հոդվածը (մաս 1-ին, կետեր 5-7) հայցադիմու-

մին ներկայացնում է որոշ պարտադիր պայմաններ, որոնց թվում են «*inter alia*» (i) այն փաստերը, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները (հայցի փաստական հիմքը), ինչպես նաև (ii) պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջն(ներ)ը (հայցի առարկա): Ընդ որում՝ նշված հոդվածի 2-րդ մասը իր 1-ին կետով հայցվորին իրավունք է վերապահում նաև նշել վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառման ենթակա իրավական նորմերը (հայցի իրավական հիմք):

Ստացվում է, որ հայցի հիմքը և առարկան կազմում են հայցի այն հիմնական բաղադրիչները, որոնք առարկա են հանդիսանալու ողջ հետագա դատական քննության համար, իսկ դրանց ճիշտ կազմումը և ներկայացումը մեծամասամբ ունենալու է էական նշանակություն հոգուտ հայցվորի գործի լուծման համար: Ընդ որում՝ հենց հայցի հիմքով և առարկայով է դատարանը հայցադիմումի վարույթ ընդունման փուլում կարողանալու որոշել մի շարք այլ վավերապայմանների պատշաճ պահպանված լինելը (օրինակ՝ կողմին ուղղված պահանջից կարող է կախված լինել գործի ընդդատություն, ենթակայությունը, պահանջի տեսակից է մեծամասամբ կախված պետական տուրքի հետ կապված հարցերը և այլն): Վերոնշյալը հաշվի առնելով է, որ օրենսդիրը պարտադիր է համարել հացի առարկայի և փաստական հիմքի պարտադիր առկայությունը ներկայացվող հայցադիմումում մեջ, իսկ դրանցից թեկուզ մեկի բացակայության պարագայում, հայցադիմումը ենթակա է վերադարձման:

Այսպիսով, դատարանը գործը հարուցում է միայն հայցադիմումի կամ դիմումի հիման վրա, իսկ դատարանը պետք է գործը քննի ներկայացված հայցի հիմքի և առարկայի շրջանակում, և, հետևաբար, սկզբնական հայցն իր հիմքով և առարկայով կարևոր նշանակություն ունի գործի քննության ծավալի համար:

Այդուհանդերձ գործնականում հանդիպում են իրավիճակներ, երբ դատարան հայց ներկայացնելուց հետո, օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներից ելնելով, անհրաժեշտություն է առաջանում փոփոխել հայցվորին ուղղված պահանջը և/կամ դրա հիմքում դրված փաստերը: Նման փոփոխության համար կարող են հիմք հանդիսանալ ինչպես օբյեկտիվ իրականության մեջ տեղի ունեցած փոփոխությունները (օրինակ՝ աշխատանքից ազատման հրամանը մտել է ուժի մեջ, աճել է պատճառված վնասի չափը), հայցվորի կողմից հայցադիմումում նշված ձևակերպումներն իր կարծիքով առավել ճիշտ ձևակերպումներով փոխարինելը (օրինակ՝ գումարի բռնագանձման պահանջի դեպքում հայցվորը սխալ է հաշվարկել բռնագանձման ենթակա գումարի չափը), այնպես էլ հայցվորի կողմից իր խախտված իրավունքի առավել օպտիմալ պաշտպանության եղանակի ընտրության ցանկությունը (օրինակ՝ եթե պայմանագրով նախատեսվել է կան տուժանքի բռնագանձում, կան վնասի հատուցում, իսկ հայցվորն ի սկզբանե դատարան է դիմել վնասների հատուցման պահանջով, ապա վերջինս կարող է պահանջը փոխել և պահանջել տուժանքի բռնագանձում): Նման պայմաններում անհրաժեշտություն է առաջանում որոշակի փոփոխություններ մտցնել հայցադիմումում՝ այն ուղղելու, լրացնելու, շտկելու նպատակով:

«ՔԴՕ 12-րդ հոդվածին համապատասխան հայցի առարկայի փոփոխու-

թյունը, պահանջից (դրա մի մասից) հրաժարվելու հետ մեկտեղ հանդիսանում է հայցվորի տնօրինչական գործողություններից մեկը, որով վերջինս որոշակիորեն «հրաժարվում է» իր սկզբնական պահանջներից՝ դրանք տրանսֆորմացնելով, և միաժամանակ պահանջում է դատարանից, առանց գործի վարույթը կարճելու, քննել և վճիռ կայացնել արդեն փոփոխված պահանջի մասին: Այլ կերպ ասած՝ հայցի առարկայի փոփոխման իրավունքը հանդիսանում է հայցվորի արդար դատաքննության իրավունքի մաս կազմող այն իրավունքը, ըստ որի՝ վերջինս է որոշում, թե ինչպիսի պահանջ (ինչ չափի, բովանդակությամբ և այլն) պետք է ներկայացնի դատարան:

Այս կապակցությամբ հարկ է արձանագրել, որ հայցվորի դատարան դիմելու, այսինքն՝ **«հայցի իրավունքը»** իր ամրագրումն է ստացել ինչպես ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածներով, ըստ որոնց՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք, այնպես էլ արդեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, որի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմելու դատարան՝ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար: Նշված «հայցի իրավունքը» հանդիսանում է հայցվորի այն գլխավոր և հիմնական տնօրինչական գործողությունը, որի իրացումը, սահմանված կարգի պահպանման դեպքում հիմք է հանդիսանում քաղաքացիական գործի հարուցման համար: Դատարան դիմելու իրավունքն իր մեջ ներառում է **ոչ միայն դատարան դիմելու և հայցապահանջի բավարարում ստանալու**, հետևապես նաև վիճարկվող կամ խախտված իրավունքը վերականգնելու, այլև **դատարան դիմելու կամ չդիմելու, պատասխանողին ընտրելու, հայցի հիմքերը և պահանջ(ներ)ը ինքնուրույն որոշելու իրավունքը**:

Նման դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը, ըստ որի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սկզբունքներից է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները: Տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն անձանց հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել՝ **դիմել, թե չդիմել դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար**, այսինքն՝ իրականացնել, թե չիրականացնել իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքը: Անձինք իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքն իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է առաջնորդվեն վերը նշված սկզբունքով:

Դատական պաշտպանության իրավունքի իրացումը տնօրինչականության

(դիսպոզիտիվության) սկզբունքի հիման վրա անձի համար երաշխավորում է նաև հայցի **առարկան և հիմքն ինքնուրույն որոշելու իրավական հնարավորություն** («Ա/Ձ Գևորգ Դավթյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մաշտոցի հարկային տեսչության թիվ ՎԴ/2976/05/15 վարչական գործով» ՀՀ Վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը):

Վերոնշյալը հաշվի առնելով՝ կարելի է նշել, որ հայցի առարկայի փոփոխման իրավունքն ածանցվում է անձի դատարան դիմելու, այսինքն՝ «հայցի իրավունքի» այն կարևոր բաղադրիչից, ըստ որի՝ հայցվորն ինքն է որոշում, թե ինչպիսի պահանջ (ինչ չափով, ինչ բովանդակությամբ և այլն) ներկայացնի դատարան, այսինքն՝ հայցի առարկայի փոփոխման իրավունքը լայն առումով հանդիսանում է «հայցի իրավունքի» բովանդակային տարրերից մեկը: Հայցի իրավունքի կարևոր տարրերից մեկն այն է, որ դատարանը քննի հայցվորի համար ամբողջությամբ ընդունելի հայց՝ ներառյալ հայցի հիմնավորումները և պահանջը, իսկ դատարանը հայց ներկայացնելուց հետո, ինչպես վերը նշվել է, կարող է առաջանալ անհրաժեշտություն (ընդ որում, պայմանավորված նաև պատասխանողի գործողություններով) փոփոխել պատասխանողի դեմ ուղղված պահանջը: Այսինքն՝ **հայցի առարկայի փոփոխությունն ուղղված է իրավունքի պաշտպանության նպատակով հարուցված հայցին արդյունավետ բովանդակություն տալուն և խախտված իրավունքների պաշտպանության դատական միջոցի արդյունավետությունը բարձրացնելուն, ինչպես նաև դատական խնայողությանը**: Միաժամանակ, հարկ է արձանագրել, որ հայցի առարկայի փոփոխությունը չի կարող ուղղված լինել գործի վարույթը դադարեցնելուն, այլ կերպ ասած՝ հայցի առարկայի փոփոխության առանձնահատկությունը այն է, որ այն ոչ թե ուղղված է պատասխանողի նկատմամբ կոնկրետ պահանջներից ամբողջությամբ հրաժարվելուն, այլ պատասխանողի նկատմամբ պահանջների ձևափոխմանը: Հակառակ պարագայում՝ խոսքը գնալու է պահանջներից հրաժարվելու և ոչ հայցի առարկայի փոփոխման մասին:

Այսինքն՝ դատարան հայցադիմում ներկայացնելու իրավունքն ուղղված է անձի՝ խախտված իրավունքների վերականգնմանը, իսկ հայցի առարկայի փոփոխությունն իր հերթին ուղղված է անձի իրավունքների դատական պաշտպանության առավել արդյունավետ իրականացմանը:

Հայցադիմում դատարան ներկայացնելուց հետո պատասխանողին այլ պահանջներ ուղղելու (իր հետ կապված) իրավունքի իրացումը, ըստ էության, կատարվելու է հայցի առարկայի փոփոխման, այն է՝ հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը լրացնելու միջոցով, և հատկապես նշված լրացման նկատմամբ նույնպես ենթակա են կիրառման հայցային վաղեմության ժամկետները: Պատասխանողին նոր պահանջներ ներկայացնելը միևնույն գործի շրջանակներում մի կողմից ապահովում է հայցվորի համար պատասխանողին ուղղված առավել ընդունելի հայցի առկայությունը, իսկ մյուս կողմից ապահովում է միևնույն գործի շրջանակում բոլոր պահանջների առա-

¹ Տե՛ս Վ. Եսայան, Հայցապահանջի փոփոխման հիմնահարցերը քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան 2018, էջ 448:

վել արդյունավետ և արագ քննությունը, ինչը նույնպես իր էությամբ կազմում է հայցվորի արդար դատաքննության իրավունքի կարևոր տարր (օրինակ՝ աշխատանքի վերականգնման պահանջի հետ մեկտեղ կարող է ավելացվել նաև պարապորդի ողջ ժամանակահատվածի համար գումարի բռնագանձման պահանջ կամ, օրինակ, տուժանքի բռնագանձման պահանջի դեպքում, եթե տուժանքը լրիվ չի ծածկում կողմի կրած վնասները, ապա վերջինս կարող է պահանջել նաև վնասների հատուցում կամ վիրավորանքի կամ գրպարտության դեպքում կարող է բացի ոչ նյութական փոխհատուցումից պահանջել նաև նյութական փոխհատուցում և այլն):

Այսինքն՝ հայցի առարկայի փոփոխությունն ունի երկակի բնույթ. մի կողմից այն ուղղված է **սկզբնական հայցապահանջ(ներ)ը ուղղելուն, շտկելուն և հստակեցնելուն**, իսկ մյուս կողմից ուղղված է **խախտված կամ վիճարկվող սուբյեկտիվ իրավունքը, օրինական շահը պաշտպանելու նպատակով, պատասխանողին այլ պահանջներ ներկայացնելով, պաշտպանության այլ միջոցներ ներգրավելուն**:

Այսպիսով, հայցի առարկայի փոփոխման իրավունքը հանդիսանում է հայցվորի արդար դատաքննության սահմանադրական իրավունքի կարևոր բաղկացուցիչ մաս: Եվ, հետևաբար, նշված իրավունքի իրացման համար անհրաժեշտ է, որ ապահովվի դատարան դիմելու մատչելիությունը սկզբունքը, որն ամրագրվել է ինչպես ՀՀ Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում (*ՄԴՈ-890, ՄԴՈ-1115, ՄԴՈ-1190 և այլն*), այնպես էլ, որոնց ընդհանուր տրամաբանությունը հանգում է նրան, որ դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը, իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման:

Նման դիրքորոշում է հայտնել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր մի շարք որոշումներում, ըստ որոնց՝ այս իրավունքը բացարձակ չէ, և պետությունները կարող են այն իրացնելու հնարավորությունը պայմանավորել որոշակի պահանջներով և չափանիշներով², պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի դրանից՝ սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն»³, սահմանափակումները չեն կարող համապատասխանել Կոնվենցիայի

² Luordo v. Italy, 2003 թ. հոկտեմբերի 17-ի վճիռ, Staroszczyk v. Poland, 2007թ. հուլիսի 9-ի վճիռ:

³ Case of Khalifaoui v. France, application no. 34791/97, 14/03/2000.

6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, եթե չեն հետապնդում իրավաչափ նպատակ կամ բացակայում է ընտրված միջոցների և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև պատճառական կապը (*Marini v. Albania (application no. 3738/02), 18.12.2007, §113*):

Տվյալ պարագայում հայցի առարկայի լրացման առումով դատարան դիմելու իրավունքը նույն դատավարության շրջանակում որոշակիորեն սահմանափակված է ժամանակային առումով (մասնավորապես՝ հայցվորը հայցի առարկայի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացնում է մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը), որից հետո հայցի առարկայի փոփոխման միջնորդությունը դատարանի կողմից ենթակա չէ բավարարման և բացի այս նման փոփոխությունը թույլատրվում է, եթե չի փոփոխվում այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, քննվող գործը դուրս չի գալու առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից: Օրենսդրի կողմից նշված սահմանափակումն, ըստ էության, իրավաչափ է, և նպատակ է հետապնդում հավասարակշռելու հայցվորի և պատասխանողի իրավունքները: Նշված սահմանափակումը հնարավորություն չի տալիս հայցվորին դատավարության ցանկացած փուլում փոփոխելու պատասխանողին ուղղված պահանջը, ինչպես նաև դուրս գալ այն իրավունքի կամ օրինական շահի և այն դատարանի ենթակայության սահմաններից, որին վերջինս դիմել է՝ դրանով իսկ մտցնելով հստակություն դատական պրոցեսում ինչպես դատարանի, այնպես էլ պատասխանող կողմի համար՝ վերջինիս հնարավորություն տալով արդեն ապացուցման պարտականության բաշխման մասին որոշման կայացման պահից հստակ պատկերացում կազմելու հայցից պաշտպանվելու հետագա քայլերի մասին, ընդ որում՝ ՀՀ ՔԴՕ 156-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 138-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ դատարանը պատասխանողին տրամադրում է որոշակի ժամկետ հայցի առարկայի փոփոխման վերաբերյալ դիրքորոշում հայտնելու համար, ինչը համահունչ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Նիկողոսյանը և Մելքոնյանն ընդդեմ ՀՀ-ի գործով» դատավարության ընթացքում կողմերի իրավահավասարության սկզբունքի վերաբերյալ հաստատած դիրքորոշումներին, համաձայն որի՝ «... դատավարությունում կողմերի իրավահավասարության պահանջը, որն արդար դատաքննության հասկացության հատկանիշներից մեկն է, ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմին պետք է տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր փաստարկները, ներառյալ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրան մյուս կողմի համեմատ չեն դնում էականորեն անբարենպաստ վիճակում» (*Nikoghosyan and Melkonyan v. Armenia, app. no. 11724/04 and 13350/04, 06.12.2007, §37*):

Ներկայիս ՀՀ քաղաքացիական դատավարության, ի տարբերություն 1998 թվականին ընդունված օրենսգրքի⁴ սահմանափակ կերպով թվարկել է հայցի առարկայի փոփոխման հնարավոր եղանակները, դրանք են՝

⁴ Ինչպես նաև ի տարբերություն ԱԴՀ երկրների մեծ մասի քաղաքացիական դատավարության օրենսգրքերի:

ա) պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջն այլ պահանջով փոխարինելը,

բ) պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը փոփոխելը,

գ) պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը լրացնելը,

դ) պահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը:

Այսպես, քննարկենք դրանցից յուրաքանչյուրը առանձին.

1) պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջն այլ պահանջով փոխարինելով. հայցի առարկայի փոփոխման նշված ձևը նաևևառաջ վերաբերում է հայցվորի, այսպես կոչված, «այլընտրանքային» պահանջներին: Մասնավորապես, տվյալ պարագայում խոսքը գնում է այն դեպքերի մասին, երբ նյութաիրավական նորմերը հայցվորին հնարավորություն են տալիս իր ընտրությամբ պատասխանողին ներկայացնել մեկից ավելի պահանջներ, օրինակ՝ ՀՀ ՔԴՕ 491-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե վաճառողն ապրանքի թերությունների մասին նախապայման չի սահմանել, ապա գնորդը, ում հանձնված է անպատշաճ որակի ապրանքը, իրավունք ունի վաճառողից, իր ընտրությամբ, պահանջել՝ 1) համաչափ պակասեցնելու ապրանքի գինը, 2) ողջամիտ ժամկետում անհատույց վերացնելու ապրանքի թերությունները, 3) հատուցելու ապրանքի թերությունները վերացնելու համար իր կրած ծախսերը: Տվյալ պարագայում, եթե հայցվորը դատարան պահանջ է ներկայացրել օրինակ ողջամիտ ժամկետում ապրանքի թերությունները անհատույց վերացնելու վերաբերյալ, վերջինս, օգտվելով հայցի փոփոխման սույն հիմքից կարող է պահանջը փոփոխել և ներկայացնել ապրանքի գինը համաչափ պակասեցնելու պահանջ: Նշված հիմքով հայցի փոփոխման օրինակ կարող է ծառայել նաև հայցվորը 197-րդ հոդվածին համապատասխան հայցվորը նախ ներկայացրել է բաժինն առանձնացնելու պահանջ, սակայն որոշ հանգամանքներից ելնելով փոփոխում է հայցի առարկան և պահանջում է գույքը հրապարակային սակարկություններով վաճառել:

Բացի այդ՝ այս ձևով հայցի առարկայի փոփոխությունը հնարավոր է ոչ միայն «այլընտրանքային պահանջների» առկայության դեպքում, այսինքն՝ հայցվորը կարող է մի պահանջի փոխարեն պատասխանողին ներկայացնել այլ պահանջ նաև այն պարագայում, երբ օբյեկտիվ իրականությունում տեղի ունեցած փոփոխություններով պայմանավորված առաջանում է նման անհրաժեշտություն, օրինակ՝ հայցվորը դատարան պահանջ է ներկայացնել, որպեսզի արգելի պատասխանողին իրեն գնումներին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառել, սակայն այդ ընթացքում պատասխանողի կողմից հայցվորն արդեն ներառվել է այդ ցուցակում, և հայցվորը փոփոխում է պահանջը և պահանջում հանել իրեն այդ ցուցակից, կամ հայցվորը, ելնելով որոշ հանգամանքներից, որոշում է փոխարինել պահանջը, օրինակ՝ հայցվորը փոխարինում է աշխատանքի վերականգման պահանջը հարկադիր պարապորդի ողջ ժամանակահատվածի համար վճարման ենթակա գումարը գանձելու պահանջով:

Այսպիսով, հայցի առարկայի փոփոխության նման ձևն իրենից ենթադրում է հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջի փոխարինում բովանդակային առումով այլ նյութաիրավական պահանջով:

2) պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը փոփոխելը. հայցի փոփոխման այս ձևի պարագայում տեղի չի ունենում հայցվորին ուղղված

պահանջի փոխարինում այլ պահանջով, այլ միայն տեղի է ունենում առկա պահանջ(ներ)ում փոփոխություն: Հայցի առարկայի փոփոխման այս ձևը հանդիսանում է առավել տարածված դրսևորում է և ներառում է առավել մեծ թվով իրավիճակներ: Մասնավորապես, այն կարող ուղղված լինել ինչպես պահանջը բովանդակային առումով փոփոխելուն, օրինակ՝ եթե ներկայացվել երեխայի տեսակցության կարգ սահմանելու պահանջ, ապա կարող է փոփոխվել ի սկզբանե սահմանված կարգը, կամ օրինակ կարող է պահանջվել ճանաչել սեփականության իրավունքը բնակարանի 1/2, այլ ոչ թե 1/3 նկատմամբ, այնպես էլ դրանում ուղղումներ, շտկումներ մտցնելով՝ դրանից առանձին մասեր հանելով, օրինակ՝ վիրավորանքի կամ զրպարտության դեպքում կարող է փոփոխվել հերքման կամ ներողության տեքստը, կամ սույն հիմքով հայցվորը կարող է ուղղել պատասխանում առկա անհատակությունները, սխալներ և այն առավել կոնկրետացնել, օրինակ՝ հայցապահանջում առկա «վերոնշյալ բնակարանը» արտահայտության փոխարեն հայցվորը կարող է նշել բնակարանի հասցեն և այլն:

Նշված պարագայում էականը այն է, որ պահանջում կատարված փոփոխությունները չհանգեցնեն պահանջի լրիվ փոփոխության, այսինքն՝ չներկայացվի, ըստ էության, այլ նյութաիրավական պահանջ, հակառակ պարագայում գործ կունենանք հայցի առարկայի փոփոխության 1-ին ձևի հետ:

3) պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը լրացնելը. հայցի առարկայի փոփոխության այս հիմքը, ըստ էության հնարավորություն է տալիս հայցվորին լրացնել (ավելացնել) պատասխանողի դեմ ուղղված նյութաիրավական պահանջները, օրինակ՝ հայցվորը կարող է պահանջել բռնագանձել ոչ միայն փոխառության գումարը, այլ նաև լրացնելով հայցապահանջը՝ պահանջել բռնագանձել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները, կամ եթե պահանջ է ներկայացվել անչափահասի կնքված գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին, ապա կարող է ավելացվել նաև վնասների հատուցման պահանջ և այլն:

Նշված բոլոր դեպքերում իրավունքի պաշտպանության մեկ եղանակը մյուսով չի փոխարինվում, նոր պաշտպանության եղանակները սկզբնապես հայցված եղանակների կիրառումը չեն բացառում: Ընդլայնվում են միայն հայցի առարկայի շրջանակները, և դատարանի մոտ ծագում է ոչ միայն սկզբնապես, այլ նաև լրացուցիչ հայցված պաշտպանության եղանակների իրավաչափությունը ստուգելու և հայցվորի ընդլայնված պահանջներին վճռով պատասխանելու պարտականություն:

Վերոնշյալ երեք ձևերը հանդիսանում են հայցի առարկայի փոփոխության **որակական հիմքերը:** Միաժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին ամրագրել է հայցի առարկայի փոփոխության նաև **քանակական հիմքերը**, այն է՝ պահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը: Ընդ որում, ի տարբերություն 1998 թվականին ընդունված ՔԴՕ-ի 2018 թվականին ընդունված քաղաքացիական դատավարության օրենսգրքը հստակ սահմանում է, որ հայցի առարկայի փոփոխման քանակական հիմքերը հանդիսանում են հայցի առարկայի փոփոխության տարատեսակ՝ դրանով իսկ լուծելով տեսության մեջ առկա

այն վեճը, թե արդյոք նման փոփոխությունները համարվում են հայցի առարկայի փոփոխություն, թե ոչ:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է նշել, որ **հայցի առարկայի փոփոխությունը հանդիսանում է հայցվորի արդար դատաքննության իրավունքի մաս կազմող կարևոր տնօրինչական գործողություն, որն ուղղված է առանց գործի վարույթի (դրա մի մասի) դադարեցման և առանց պահանջներից հրաժարվելու պահանջները ձևափոխելու (այլ պահանջով փոխարինելու, փոփոխելու, լրացնելու, պահանջներն ավելացնելու և նվազեցնելու) միջոցով միևնույն գործի շրջանակում դատարանին փոփոխված պահանջ ներկայացնելուն և այդ պահանջի վերաբերյալ վճիռ ստանալուն:**

Ինչ վերաբերում է պահանջներից ամբողջությամբ կամ մասնակի հրաժարվելուն, ապա հարկ արձանագրել հետևյալը.

«ՔԴՕ 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը կարող է ներկայացվել (...) ընդդեմ մի քանի պատասխանողի (համապատասխանողների):»

«ՔԴՕ 149-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորն իրավունք ունի **ամբողջությամբ կամ մասնակիորեն** հրաժարվել իր պահանջներից մինչև առաջին ատյանի դատարանի կողմից դատաքննությունն ավարտելը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախքան գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելը գործին մասնակցող անձանց բացատրում է պահանջից հրաժարվելու դատավարական հետևանքները:

«ՔԴՕ 126-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝ նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտ, բացառությամբ հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին որոշման:

Վճռաբեկ դատարանը գործերից մեկով նշել է, որ **հայցից հրաժարումը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջից և իրավունքի պաշտպանության դատավարական միջոցից անվերապահորեն, առանց որևէ պայմանի հրաժարումն է:** Հայցից հրաժարումը հայցվորի միակողմանի տնօրինչական գործողություն է, որը կարող է տեղի ունենալ տարբեր նկատառումներով: Դատարանը չպետք է անդրադառնա հայցից հրաժարվելու պատճառների գնահատմանը, սակայն պարտավոր է հայցվորին պարզաբանել կատարվող գործողության իմաստն ու նշանակությունը և համոզվել, որ հայցից հրաժարումը վերջինիս ազատ կամքի արտահայտությունն է և զերծ է այլ անձանց հարկադրանքից (*տես թիվ ԵԿԴ/0462/02/08 քաղաքացիական գործով* «Վճռաբեկ դատարանի 19.10.2012 թվականի որոշումը»):

Ինչպես նշում է Ե. Գ. Ռուսինովան, հայցից հրաժարվելը հայցվորի կողմից գործի քննության ընթացքում արված միակողմանի, անվերապահ կամահայտություն է, որն ուղղված է գործի վարույթը լրիվ կամ մասնակի կարճելուն⁵:

⁵ Տե՛ս *Русинова Е.Р.*, Распорядительные права сторон в гражданском процессе, дис. ... канд. юрид. наук: Специальность 12.00.15 - гражданский процесс; арбитражный процесс / Е.Р. Русинова; УрГЮА.

Փաստորեն պահանջներից կամ դրանց մի մասից հրաժարումը հանդիսանում է կողմի տնօրինչական գործողությունը, որի կիրառմամբ հայցվորը տնօրինում է իր իրավունքների և օրինական շահերի՝ քաղաքացիական դատավարության կանոններով պաշտպանության միջոցները: Այսինքն՝ տվյալ պարագայում, ի տարբերություն հայցի առարկայի փոփոխության, հայցվորը դադարեցնում է իր իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության գործընթացը: Ընդ որում, դա կարող է վերաբերել ինչպես հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջի շրջանակներում դատական պաշտպանության գործընթացը դադարեցնելուն, այնպես էլ կոնկրետ պատասխանողի մասով պաշտպանության գործընթացը դադարեցնելուն:

Հայցի առարկայի փոփոխումը և պահանջներից (մի քանիսից) հրաժարումը հանդիսանում են տարբեր դատավարական ինստիտուտներ և ունեն տարբեր կիրառում: Դրանց տարբերություններն, ըստ էության, հանգում են հետևյալին.

1. հայցի առարկայի փոփոխությունն ուղղված է իրավունքի պաշտպանության նպատակով հարուցված հայցին արդյունավետ բովանդակություն տալուն և խախտված իրավունքների պաշտպանության դատական միջոցի արդյունավետությունը բարձրացնելուն, ընդ որում հայցի առարկայի փոփոխությունը կարող է տեղի ունենալ ինչպես այն փոփոխելու, այնպես էլ նվազեցնելու միջոցով այն դեպքում, երբ պահանջներից կամ դրանց մի մասից հրաժարումն իրենից ներկայացնում է հրաժարում հայցվորին ուղղված պահանջներից և իրավունքի պաշտպանության դատավարական միջոցից, ընդ որում, ի տարբերություն հայցի առարկայի փոփոխման, պահանջներից հրաժարումը տեղի է ունենում միայն դրանցից հրաժարման ձևով, և իրենից չի կարող ենթադրել պահանջների ձևափոխում, փոփոխում, լրացում,

2. հայցի առարկան փոփոխելու դեպքում դատարանն ընդունում է որոշում հայցի առարկայի փոփոխության վերաբերյալ, որն իրենից չի ներկայացնում եզրափակիչ դատական ակտ, որի պարագայում **հայցապահանջի նվազած կամ փոխարինված մասով կողմը չի զրկվում հետագայում դատարան դիմելու հնարավորությունից**, այն դեպքում, երբ պահանջներից հրաժարվելու դեպքում դատարանը կայացնում է վարույթի կամ դրա մի մասի կարճման մասին որոշում, որն իրենից ներկայացնում է եզրափակիչ դատական ակտ, ինչը բացառում է նույն հայցապահանջով հետագայում կրկին դատարան դիմելու հնարավորությունը, իսկ եթե նվազ հայցադիմումն արդեն վարույթ է ընդունվել, ապա գործի վարույթը ենթակա է կարճման: Հայցի առարկայի փոփոխման դեպքում գործի վարույթը շարունակվում է, իսկ հայցից հրաժարման դեպքում այն ամբողջությամբ կամ հրաժարված մասով դադարում է:

3. տարբերվում են նաև այս ինստիտուտները դրանց կիրառման կարգով, մասնավորապես.

- հայցի առարկայի փոփոխությունը հնարավոր է մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը, իսկ հայցից հրաժարումը հնարավոր է մինչև առաջին ատյանի դատարանի կողմից դատաքնությունն

ավարտելը:

- հաշվի առնելով հայցից հրաժարման առավել խիստ դատավարական հետևանքները՝ դատարանը պարտավոր է նախքան գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելը գործին մասնակցող անձանց բացատրել պահանջից հրաժարվելու դատավարական հետևանքները, իսկ հայցի առարկան փոփոխելու վերաբերյալ նման պահանջի օրենսդիրը չի ներկայացնում: Այսինքն՝ **հայցից հրաժարվելու դեպքում տնօրինչականության սկզբունքը (ՀՀ ՔԴՕ 12-րդ հոդվածի 3-րդ մաս) զուգակցվում է մրցակցության սկզբունքի շրջանակներում դատարանի դերով (ՀՀ ՔԴՕ 13-րդ հոդվածի 2-րդ մաս), իսկ հայցի առարկայի փոփոխության դեպքում այդպիսի զուգակցում առկա չէ, դրա փոխարեն առկա է տնօրինչականության սկզբունքի համաչափ սահմանափակում:** Հետևաբար, ի տարբերություն հայցից հրաժարման, որը հնարավոր է առանց որևէ պայմանի, հայցի առարկայի փոփոխությունը հնարավոր է միայն, եթե չի փոփոխվում է այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, կամ քննվող գործը դուրս չի գալիս առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից: ՀՀ Սահմանադրական դատարանը իր թիվ ՍԴՈ-1515 որոշմամբ այս կապակցությամբ նշել է, որ «(...) հայցից հրաժարվելու հայցվորի որոշումը կամավոր է և պետք է լինի կշռադատված ու մտածված, «pro et contra» բոլոր հանգամանքների հաշվառմամբ: Հետևաբար, հայցից հրաժարվելու հիմքով քաղաքացիական գործի վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով կրկին դատարան դիմելու օրենսդրական արգելքը, լինելով անձի կամահայտնության դատավարական հետևանք, ընդհանուր առմամբ համապատասխանում է Սահմանադրության 78-րդ հոդվածում ամրագրված համաչափության սկզբունքին»⁶:

4. այս ինստիտուտները տարբերվում են նաև **դատավարական ծախսերի տեսանկյունից**, մասնավորապես հայցի առարկան փոփոխելու դեպքում պետական տուրքի գումարի չբավականացնող մասը գանձվում է հայցի առարկան փոփոխելիս՝ փոփոխված հայցի առարկային համապատասխան, իսկ եթե գործի քննության ընթացքում հայցվորը փոփոխել է հայցի առարկան այնպես, որ առաջացել է պետական տուրքի ավել վճարված մաս, ապա ավել վճարված մասը ենթակա չէ վերադարձման, ապա գործի վարույթի կարճման դեպքում, հաշվի առնելով, որ գործի վարույթի կարճումն իրենից ներկայացնում է եզրափակիչ դատական ակտ, դատական ծախսերի փոխհատուցման հարցը դատարանը լուծում է եզրափակիչ դատական ակտով:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալ վերլուծությունները՝ հայցից հրաժարման և հայցի առարկայի փոփոխման ինստիտուտներն իրենց բնույթով հանդիսանում են տարբեր դատավարական ինստիտուտներ, որոնք հետապնդում են տարբեր իրավաչափ դատավարական նպատակներ և դրանց կիրառման դեպքում առկա են տարբեր հետևանքներ: Այլ կերպ՝ «հայցից հրաժարումը նշանակում է, որ հայցվորը հրաժարվում է պատասխանողին ուղղված նյութական պահանջներից

⁶ Տե՛ս թիվ ՍԴՈ-1515 գործով ՀՀ Սահմանադրական դատարանի 11.02.2020 թվականի որոշումը:

և գործի ավարտը, իսկ հայցի առարկայի փոփոխությունը նշանակում է հանգամանքների փոփոխություն և իրավունքների և օրինական շահերի հետագա պաշտպանություն»⁷:

Այդուհանդերձ, հնարավոր են իրավիճակներ, երբ թեև կողմը ներկայացնում է միջնորդություն հայցի առարկան փոփոխելու վերաբերյալ, սակայն, ըստ էության, այդ միջնորդությունը հանդիսանում է պահանջներից կամ դրանց մի մասից հրաժարումը: Նման իրավիճակները հատկապես առաջ են գալիս այն ժամանակ, երբ հայցվորը նվազեցնում է դրամային պահանջի չափը, կամ, օրինակ, ոչ դրամական պահանջում տեղի է ունենում դեպի այդ պահանջի նվազմամբ փոփոխություն: Նշված բոլոր պարագաներում անհրաժեշտություն է առաջանում տարբերակել հայցի առարկայի փոփոխությունը պահանջից հրաժարումից:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ տարբերակելու համար թե՛ ներկայացված միջնորդություն իրենից ներկայացնում է հայցի առարկայի փոփոխություն, թե՛ պահանջներից կամ դրանց մի մասի հրաժարում, անհրաժեշտ է հաշվի առնել, որ հայցի առարկայի փոփոխության պարագայում պատասխանողին ուղղված պահանջները ամբողջությամբ չեն վերանում, դրանք տրանսֆորմացվում են այլ պահանջների, այն դեպքում, երբ պահանջներից հրաժարումը ենթադրում է այդ պահանջների իսպառ վերացում՝ առանց որևէ փոփոխության: Այլ կերպ ասած՝ **հայցի առարկայի փոփոխության դեպքում հայցվորը պարզապես հրաժարվում է իր պահանջի սկզբնական տեսքից, բայց չի հրաժարվում իրավունքի պաշտպանության դատավարական միջոցից, այսինքն՝ վերջինս շարունակում է օգտվել իրավունքի պաշտպանության դատավարական միջոցից, սակայն արդեն փոփոխված պահանջով, այն դեպքում, երբ պահանջներից հրաժարվելու դեպքում և՛ պահանջն է լրիվ և ամբողջությամբ վերանում, և՛ իրավունքի պաշտպանության դատավարական միջոցը:** Օրինակ՝ եթե կողմը ներկայացրել է 100,000 ՀՀ դրամի պահանջ, իսկ հետո նվազեցրել է պահանջը 50,000 ՀՀ դրամով՝ հայցի առարկայի փոփոխության միջոցով, ապա տվյալ պարագայում 50,000 ՀՀ դրամի չափով տեղի է ունենում ոչ թե պահանջից հրաժարում, այլ դրա նվազեցում, քանի որ պահանջն ինքն իրենով չի դադարում, այն պարզապես քանակապես վերափոխվում է: Նույն կերպ, եթե կողմը ներկայացրել է պահանջ ապրանքի գինը համաչափ նվազեցնելու մասին, իսկ հետո փոխարինել է պահանջը ապրանքի գինը համաչափ պակասեցնելու պահանջով, ապա կողմի պահանջը չի դադարում, այն պարզապես փոխարինվում է այլ պահանջով: Սակայն այն դեպքում, երբ կողմը հայցի առարկան փոխվում է այնպես, որ պահանջներից մեկը պարզապես դուրս է մնում, իսկ կողմը չի էլ պահանջում դրա վերաբերյալ վճիռ կայացնել, հատկապես այն պայմաններում, երբ հայցի առարկայի փոփոխությունը հիմնավորվում է այդ պահանջն ամբողջությամբ դուրս հանելու հետ, ապա տվյալ պարագայում խոսքը գնում է պահանջից հրաժարման և ոչ հայցի առարկայի փոփոխության մասին (օրինակ՝ եթե ի սկզբանե ներկայացված հայցից հայցվորը ամբողջությամբ հանում է բռնագանձման ենթակա գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկված

⁷ См. Формы изменения иска Биктурова В.Ф., Вестник науки и образования, № 1(25), 2017, էջ 76:

տոկոսները կամ եթե կողմը ներկայացրել է պայմանագրի լուծման, պատճառված վնասի փոխհատուցման, և տուժանքի բռնագանձման մասին պահանջ և հայցի առարկայի փոփոխությամբ պահանջում է միայն պայմանագրի լուծումը և տուժանքի բռնագանձումը):

Միաժամանակ, այն դեպքերում, երբ հայցի փոփոխությունը չի հանգեցնում պահանջի վերացման, այլ միայն նվազեցնում է այն, ապա հայցվորին է պատկանում նշված իրավունքներից ցանկացածի ընտրության և կիրառման իրավունքը, և **հայցվորն է որոշում, թե կոնկրետ պահանջի նվազեցումը հանդիսանում է հայցի առարկայի փոփոխություն, թե պահանջի այդ մասից հրաժարում** (օրինակ՝ 100,000 ՀՀ դրամի պահանջի պարագայում 50,000 ՀՀ դրամի պահանջից հրաժարումը կարող է պայմանավորված լինել պատասխանողի կողմից պարտավորության այդ մասի կատարմամբ): Նշված եզրահանգումը պայմանավորված է նրանով, որ, ինչպես և վերը նշվել էր, հայցից հրաժարումը հայցվորի համար առաջանցում է խիստ բացասական հետևանքներ, այն է՝ նույն պահանջով հետագայում դատարան դիմելու անհնարինություն, և հետևաբար, ելնելով կողմի արդար դատաքննության իրավունքից, հենց հայցվորին պետք է վերապահվի նշված երկու ինստիտուտների միջև ընտրություն կատարելու հնարավորությունը: Հակառակ մեկնաբանման պարագայում՝ կըստեղծվի մի իրավիճակ, երբ հայցվորը փաստացի ունենալով օրենսգրքով ամրագրված իրավունքներ (մասնավորապես՝ հայցապահանջի չափը նվազեցնելու), չի կարողանա դրանցից օգտվել, քանի որ ցանկացած պարագայում, երբ հայցվորը ցանկանա նվազեցնել հայցապահանջի չափը, դա դատարանի կողմից կմեկնաբանվի որպես հայցապահանջից հրաժարում⁸:

Այսպիսով՝ հայցի առարկայի փոփոխման և պահանջներից հրաժարման ինստիտուտների հարաբերակցման ժամանակ որպես չափանիշ պետք է վերցնել այն հանգամանքը, որը հայցի առարկայի փոփոխության դեպքում պահանջները պարզապես չեն վերանում, այլ շարունակում են գոյություն ունենալ փոփոխված ձևով, իսկ պահանջներից հրաժարման դեպքում այդ պահանջները իսպառ վերանում են՝ առանց փոխակերպումների և գործի քննությունը դադարում է (կամ դրանց մասով է միայն դադարում): Նշված եզրահանգման համար նաև հիմք է ծառայում այն հանգամանքը, որ ՀՀ ՔԴՕ-ն 170-րդ հոդվածում սպառիչ թվարկելով հայցի առարկայի փոփոխման հնարավոր եղանակները, դրանցում չի նախատեսել պահանջների ամբողջական դուրսհանումը. հոդվածը՝ որպես հայցի առարկայի փոփոխություն, առավելագույնը թույլատրում է փոփոխություններ կատարել հենց պահանջի ներսում (պահանջի փոփոխում կամ պահանջի նվազեցում):

Ընդ որում՝ հարկ է ավելացնել, որ **հայցի առարկայի փոփոխության ինստիտուտի էությունը հաշվի առնելով, դրա կիրառումը չի կարող, ըստ էության, ամբողջությամբ վերացնել հայցի առարկան (բոլոր հայցապահանջները) այնպես, որ ամբողջությամբ դադարի գործի քննությունը**: Այլ կերպ ասած՝ այն դեպքերում, երբ թեև կողմը ձևականորեն ներկայացրել է հայցի առարկայի փո-

⁸ Նշվածը ամբողջությամբ կիրառելի է նաև հայցի առարկայի փոփոխման և մի պահանջը մյուսով փոխարինելու դեպքերում:

փոփոխություն՝ այն նեղացնելու տեսքով, բայց այդ նեղացումն ամբողջությամբ բացառում է գործի քննությունը (կամ դրան մասնակցող անձանց մի մասով է բացառում), ապա այդ պարագայում միջնորդությունը ենթակա է մերժման, քանի որ այն իրենից, ըստ էության, ներկայացնում է պահանջից կամ դրա մի մասի հրաժարում: Օրինակ՝ կողմը ներկայացնում է հայցի առարկայի փոփոխության միջնորդություն, որով հայցի առարկայից դուրս է հանում բոլոր պահանջները կամ խնդրում է միակ պատասխանողին հանել պատասխանողի կազմից՝ առանց վերջինիս փոխարինելու:

Հարկ է նշել, որ խոսքը տվյալ դեպքում միայն այն իրավիճակների մասին է, երբ հայցի փոփոխումը, ըստ էության, լրիվ վերացնում է հայցի առարկան, և չի վերաբերում այն դեպքերին, երբ հայցի առարկայի շրջանակից դուրս են գալիս որոշ պահանջներ, և դրանք չեն բացառում գործի քննությունը:

Annotation. This article is devoted to two different civil procedure institutions - changing the basis of the lawsuit and refusing (full or partial) from the lawsuit. The author first analyzes these two institutions separately, and then compares them with each other and reveals their differences. Also, in this article, an attempt was made to identify a criterion by which, in contentious cases, these two institutions can be distinguished.

Аннотация. Настоящая статья посвящена изучению двух разных гражданско-процессуальных институтов – изменение основы иска и отказ (полный или частичный) от иска. Сначала в статье анализируются эти два института по отдельности, а затем они сравниваются друг с другом, выявляются их различия. В данной статье также была сделана попытка выявить критерий, по которому можно в спорных ситуациях различить эти два института.

Բանալի բառեր – հայցի առարկա, հայցի առարկայի փոփոխություն, հայցի առարկայի լրացում, պահանջը այլ պահանջով փոխարինել, հայցապահանջից հրաժարում (լրիվ կամ մասնակի):

Keywords: claim, change in the subject of the claim, change in the claim, replacement of one claim by another claim, rejection of the claim (full or partial).

Ключевые слова: иск, изменение предмета иска, изменение иска, замена одного требования другим иском, отказ от иска (полный или частичный).

Է. Առաքելյան – Հայաստանում ֆրանսիական համալսարանի չորրորդ կուրսի ուսանող, էլ. փոստ՝ erik.arakelyan.1999@gmail.com

Ներկայացվել է խմբագրություն 19.03.2020 թ., տրվել է գրախոսության 19.03.2020 թ., երաշխավորվել է ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, Հայաստանում ֆրանսիական համալսարանի դասախոս, ՀՀ փաստաբանական դպրոցի դասախոս, իրավագիտության թեկնածու Գոռ Թորոսյանի կողմից, ընդունվել է տպագրության 22.05.2020 թ.: